ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Գերմաներեն լեզվի բաղաձայնական համակարգի կարևոր տիպաբանական առանձնահատկություններից է բազմաբնույթ աղմկայինների առկայությունը: Լեզվի տարբերակային ձևերում այն արտահայտվում է առաջին հերթին պայթականների ու շփականների, ինչպես նաև պայթականների ու պայթաշփականների փոփոխական փոխհարաբերությամբ: Այստեղ պետք է նկատի ունենալ խուլ և ձայնեղ պայթականների որպես լարվածներ /Fortes/ ու ոչ լարվածներ /Lenes/ մի կողմից և նախաքմային ու հետնաքմային շփականների մյուս կողմից, տարբեր կարգի հարաբերությունները:Ընդ որում հիշյալ տարբերությունները պայմանավորված են ինչպես գործառնական ու սոցիալական, այնպես էլ պատմական ու տարածական գործոններով: Փորձենք առավել հանգամանորեն քննարկել այդ փոխհարաբերությունները:

Գերմաներենի պայթականների և շփականների փոխհարաբերությունները քննելիս պարզ է դառնում, որ դրանց տարբեր կարգի իրացման հնարավորությունների տեսակետից տիպաբանական ընդհանրություններ են ցուցաբերում միայն պարզ խուլերը / p,t,k/, պարզ խուլ շփականները /f,s,x/ և կրկնակի խուլ շփականները /ff,zz,hh/, իսկ դրանց համապատասխան ձայնեղ տարբերակները դուրս են մնում այդ հարաբերություններից:

Գերմաներեն լեզվի պատմական զարգացման ընթացքում խուլ պայթականները և շփականները ցուցաբերում են փոփոխությունների երկու միտումներ. պայթականների փոխարինում պարզ կամ կրկնակի շփականներով և հակառակը: Ավանդական պատմական լեզվաբանությունը, սակայն, ցույց է տալիս դրանցից միայն մեկը՝ պայթականների փոխարինում շփականներով, այսպես կոչված, ,,գերմանական կամ երկրորդ բաղաձայնական տեղաշարժի,, սահմաններում, իսկ հակառակ գործընթացը ներկայացվում է ընդամենը մի քանի առանձին դեպքերով: Բարձր գերմաներենի զարգացման վաղ փուլում արդեն տեսանելի է p,t,k պայթականների f,s,x-ի վերածման միտումը, որը տեղի է ունենում բառավերջում և բառամիջում՝ երկար ձայնավորներից հետո: Միևնույն

ժամանակ, կարճ ձայնավորներից հետո նկատվում է նշված պայթա-կանների փոխարինում կրկնակի ff,zz,hh շփականներով, որոնք հետագայում իրենց տեղը զիջում են պարզ f,s,x-ին, ինչպես, օրինակ՝ ընդհանուր գերմանական slepan, etan և ik ձևերը հին բարձր գերմաներենում դառնում են slāfan ēzzan և ih /նոր բարձր գերմաներեն schlafen, essen, ich/: Այս զարգացումը, որը հաճախ մեկնաբանվում է որպես ,,շփականացում,, , դուրս է բերվում բարձր գերմաներենի շրջանից և ներկայացվում է որպես գերմաներենի կայուն տիպաբանական առանձնահատկություններից մեկը: Ամեն դեպքում, առանձին բացառություններով հանդերձ, նշված փոփոխությունը իր արտացոլումն է գտնում թե՛ միջին գերմաներենի, և թե՛ նոր բարձր գերմաներենի շրջաններում: Այս առումով հիշատակման է արժանի մեկ այլ երևույթ, որը սերտորեն առնչվում է հին բարձր գերմաներենի բաղաձայնական տեղաշարժին: Տվյալ դեպքում խոսքը գերմանական Շ խուլ շփականի d ձայնեղի վերածման մասին է, երբ գերմանական brōþar ձևի դիմաց հին բարձր գերմաներենում ունենում ենք bruoder /ն.բ.գ. Bruder/: Միջին գերմաներենի շրջանում այս զարգացումը ընդգրկում է համարյա ամբողջ վերին գերմանական տարածքը: Տվյալ փաստը խոսում է այն տիպաբանական դրույթի օգտին, որ գերմաներենի զարգացման միջին շրջանում արդեն միմյանց հակառակ գործող միտումները խաչաձևվում են: Ստորին գերմանական տարածքում, սակայն, պայթականների շփականացման միտումը շատ թույլ է արտահայտվում: Հարկ է նշել, որ վերին գերմանական բարբառներում նույնպես նշված փոփոխությունները միասնական չեն: Այդ առումով հատկապես աչքի են ընկնում միջին արևելյան բարբառները: Այստեղ, ըստ t-ի zz-ի և s-ի վերածման միտումի, առանձնանում են հռենոսյան-ֆրանկյան և միջին ֆրանկյան բարբառները: Քանի որ այս և այլ կարգի տարբերությունները տանում են ընդհանուր տիպաբանական հատկանիշի աղոտացմանը, ապա դրանց մանրամասն քննարկումը դառնում է ոչ առաջնային:

Գերմաներենի պայթաշփականները ևս ի հայտ են բերում մի շարք տիպաբանական յուրահատկություններ, որոնք արտացոլվում են լեզվի ժամանակագրական և տարածական տարբերակներում՝ պայթականների հետ հակադրման պայմաններում: Ընդ որում այստեղ կարևոր դեր ունեն տարբեր բաղաձայնական որակները: Այդպիսով հակադրվում են պարզ p,t,k, ինչպես նաև կրկնակի pp,tt,kk պայթականները մի կողմից և pf,tz,kx պայթաշփականները մյուս կողմից: Ի տարբերություն նախորդ դեպքերի, այստեղ գործում է միայն

մեկ միտում և գերմաներենի պատմական զարգացման ընթացքում նկատվում է հիմնականում պայթականների վերածում պայթաշփականների, իսկ հակառակ գործընթացը հազվադեպ է: Նշված փոփոխությունը նույնպես մեկնաբանվում է ըստ երկրորդ տեղաշարժի, սակայն, այն առավելապես դիրքային պայմանավորվածություն ունի: Բացի այդ, պայթականների պայթաշփականացման երևույթը գերմաներենի տարածման տարբեր տարածքներում ընթանում է տարբեր ժամանակագրական հաջորդականությամբ:

Այսպիսով, պարզ p,t,k խուլերի փոխարինումը համապատասխանաբար pf,tz,kx պայթաշփականներով տեղի է ունենում հիմնականում սկզբնային դիրքում և մասամբ նաև բառամիջում ու բառավերջում բաղաձայններից հետո /սակայն ոչ մի դեպքում sp,st,sk,ft,ht և tr հնչյունակապակցություններում/: Ընդհանուր գերմանական pp,tt և kk կրկնակի բաղաձայնների պայթաշփականացումը տեղի է ունենում նույն կերպ: Ընդ որում, թեև տվյալ փոփոխության հակադարձ միտումը գերմաներենում համարյա չի գործում, սակայն, նկատվում է պայթականների շփականացման նախորդ ընդհանուր միտումը և հետագայում pf,tz,kx պայթաշփականները վերածվում են f,z,x շփականների:

Դեռ 5-6 –րդ դդ տեղի է ունենում գերմանական t-ի անցումը tz /z/-ի, որը առանձին բացառություններով ընդգրկում է համարյա ամբողջ հին բարձր գերմաներենի շրջանը, ինչպես, օրինակ գերմանական taiknam, holta և satjan ձևերը փոխարինվում են հին բարձր գերմաներենի zeihan,holz և setzen /նբգ. Zeichen,Holz և setzen / ձևերով: Գերմանական p-ի վերածումը pf-ի /կամ f-ի/ սկսվում է միայն 7-րդ դարում և հիմնականում սահմանափակվում է վերին գերմաներենի տարածքով, որտեղ ընդհանուր գերմանական plegan,helpan և appla ձևերի դիմաց հին բարձր գերմաներենում ունենում ենք pflegan,helfan և apful /նբգ. pflegen,helfen,Apfel/ : Մոտավորապես նույն ժամանակաշրջանում տեղի է ունենում նաև գերմանական k-ի վերածումը kx-ի /կամ x-ի/: Այս փոփոխությունը տարածում է գտնում բավարական ու վերին ալեմանական բարբառներում և ընդհանրապես վերին գերմաներենի տարածման հարավային շրջաններում:[1] Այսպիսով կարելի է եզրակացնել, որ պայթականների վերածումը պաթաշփականների, որը հետևողականորեն դրսևորվում է գերմաներենի ժամանակա

[1] Wiesinger P., Phonetisch- phonologische Untersuchungen zur Vokalentwicklung in den deutschen Dialekten. Berlin, 1970. S.104.

գրական և տարածական տարբերակներում, ժամանակակից գերմաներենի հնչույթային համակարգի ձևավորման կարևոր տիպաբանական առանձնահատկություններից մեկն է: Այդուհանդերձ, նշված փոփոխության մեկնաբանությունները գերմանագիտության մեջ իրարամերժ են, հետևաբար տարբեր են նաև դրա արդյունքների գնահատականները: Պատճառը տվյալ երևույթի այն առանձնահատկությունն է, որ համապատասխան փաստերի բացակայության պայմաններում դժվար է հաստատել այն տեսակետը, թե այն նախապես առաջացել է մի բարբառային տարածքում /նկատի է առնվում առավելապես վերին գերմանականը/, իսկ հետո անցել է նաև գրական լեզվին, քանի որ գոյություն ունի այլ կարծիք ևս, որ դա միասնական գործընթաց է եղել: Այն դեպքում, երբ այս երևույթի բացատրության համար հիմք է ընդունվում գերմանական կամ երկրորդ տեղաշարժը, ապա իրական է թվում առաջին տեսակետը: Նկատի ունենալով, սակայն, որ ժամանակակից գերմանագիտության մեջ նաև այլ մոտեցում է ցուցաբերվում նշված տեղաշարժի նկատմամբ և հաճախ մերժվում է դրա գոյությունը, ապա կարելի է ենթադրել, որ քննարկվող փոփոխությունը այնուամենայնիվ ընդհանուր գերմանական միտում է: Այս տեսակետի օգտին է նաև այն փաստը, որ p,t,k խուլերի պայթաշփականացումը /ինչպես նաև շփականացումը/ տեղի է ունեցել ոչ միաժամանակ, այլ ժամանակագրական որոշակի հաջորդականությամբ: Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ k>kx/x/ փոփոխությունը ժամանակագրորեն ավելի ուշ է տեղի ունեցել և գրական լեզվում իր արտացոլումը չի գտել: Նշենք, որ տիպաբանական այս դրույթին, սակայն, հակադրվում են ստորին գերմանականում առկա փաստերը, որտեղ Apfel,Pfund,zehn,Kind ձևերի դիմաց ունենք appel, pund,tein,kind: Այս հակասության վերացման համար որպես բավարար պայման առայժմ կարելի է ընդունել այն հիմնավորումը, որ լեզվական փոփոխությունները տեղի են ունենում ոչ միաժամանակ և ոչ միևնույն արագությամբ, իսկ լեզվի գրական տարբերակի ստեղծմամբ տեղի է ունենում որոշ գործընթացների սառեցում:[1] Վերջինս արտահայտվում է լեզվի խոսակցական տարբերակներում, ինչպես, օրինակ՝ k>kx փոփոխությունը չի նկատվում նաև ժամանակակից ստորին գերմաներենի խոսակցական տարբերակում:

Այսպիսով, նկատի ունենալով վերը հիշատակված այն հանգամանքը, որ

---

[1] Bartschaft B., Methoden der Sprachwissenschaft. Berlin, 1996, S. 47.

գերմաներենում պայթականների պայթաշփականացման միտումը չի հակադարձվում, կարելի է ենթադրել, որ այն կա՛մ օտար ազդեցության հետևանք է, կա՛մ էլ պայմանավորված է արտալեզվական այլ գործոններով, որից, սակայն, դրա էությունը չի փոխվում, քանի որ ժամանակակից գերմաներենի հնչույթային համակարգում պայթաշփականներն ունեն իրենց կայուն տեղը:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ խուլ և ձայնեղ պայթականների փոխհարաբերության մեջ ի հայտ են գալիս գերմաներենի բաղաձայնական համակարգի ամենակարևոր տիպաբանական յուրահատկությունները: Ասվածը առաջին հերթին հիմնավորվում է այն փաստով, որ գերմաներենի ժամանակագրական և տարածական տարբերակներում խուլ → ձայնեղ, ինչպես նաև ձայնեղ → խուլ անցումները համակարգային են և հետևողական: Հիմնական խնդիրն այստեղ p,t,k խուլերի շնչեղ արտաբերումն է ժամանակակից գերմաներենում, որը ստեղծում է առանձին դժվարություններ գերմաներենի p,t,k և b,d,g պայթականները որպես ուժեղներ /Fortes/ և թույլեր /Lenes/ դասակարգելիս՝ ըստ լարվածության հատկանիշի: Այդ առումով ավելի հեշտ է նշված պայթականների փոխհարաբերությունը քննարկել պատմական տեսանկյունից, քանի որ պատմականորեն գերմաներենի p,t,k խուլերը միանշանակ կերպով բնութագրվում են որպես ուժեղներ /լարվածներ/: Այս դեպքում ընդհանուր գերմանական միտում է դիտվում ուժեղների վերածումը թույլերի, իսկ հակառակ գործընթացը սահմանափակվում է բաղաձայնական երկրորդ տեղաշարժով, որի նկատմամբ, ինչպես նշվեց, այսօր միասնական մոտեցում գոյություն չունի: Ավանդական գերմանագիտությունը երկրորդ բաղաձայնական տեղաշարժի հիմնական ուղղությունը համարում է b,d,g ձայնեղների անցումը p,t,k խուլերի: Ընդ որում ապացուցվում է, որ հիշյալ b,d,g-ն իրենց հերթին մեկ այլ տեղաշարժի հետևանք են և առաջացել են ընդհանուր գերմանականի շփականներից:[1] Սովորաբար բաղաձայնական երկրորդ տեղաշարժը հատկացվում է 8-9-րդ դարերին և սահմանափակվում է որոշակի բարբառային տարածքով: Այդպիսով d>t փոփոխությունը նկատվում է հիմնականում վերին գերմաներենի, ինչպես նաև հարավային հռենոսյան ֆրանկերենի տարածման շրջաններում, որտեղ, օրինակ՝ հին սաքսոներենի dag և dor ձևերի դիմաց հին

---

[1] Жирмунский В.М., Введение в сравнительное изучение германских языков, М., 1964, с.71.

բարձր գերմաներենը վկայում է համապատասխանաբար tag և tor /նբգ. Tag և Tor / ձևերը: Ինչ վերաբերում է b>p փոփոխությանը, ապա այն տեղի է ունենում հիմնականում ալեմանական և բավարական բարբառներում. հմմտ. հին սաքսոներեն blod, հին բավարերեն pluat /նբգ.Blut/: Ավելի սահմանափակ տարածք է ընդգրկում g>k փոփոխությունը, որը տեղի է ունենում հիմնականում բավարերենում. հմմտ. հին սաքսոներեն geban, հին բավարերեն keban /կամ kepan/: Նշված փոփոխությունները ցույց են տալիս, որ այստեղ ևս միասնականություն գոյություն չունի և համապատասխան հետնալեզվայինի տեղաշարժը ոչ միայն ժամանակագրորեն է ուշանում, այլև շատ փոքր տարածք է ընդգրկում: Այս ամենով հանդերձ ցույց է տրվում, որ ուժեղների և թույլերի փոխհարաբերության մեջ խուլ – ձայնեղ հնչույթային հատկանիշը ամրագրվում է միայն միջին գերմաներենի զարգացման շրջանում: Մի շարք գիտնականներ, սակայն, նշված հակադրության մեջ կարևոր են համարում արտաբերման ուժը և խուլերը բնութագրում են որպես ուժեղ, իսկ ձայնեղները թույլ արտաբերմամբ բաղաձայն հնչյուններ:[1] Այդպիսով քննարկվող փոփոխությունների հիմքում որպես գերմաներենին բնորոշ ընդհանուր միտում է դիտվում մի դեպքում արտաբերման ուժեղացումը, իսկ մյուսում՝ թուլացումը: Ընդ որում արտաբերման ուժեղացման արդյունքը լինում է պարզ խուլերի շնչեղացումը, որը գործում է նաև ժամանակակից գերմաներենում: Այստեղ ևս համապատասխան միտումի գործողությունը սահմանափակվում է որոշակի տարածքով և հիմնականում դրսևորվում է վերին գերմանականում: Հին բարձր գերմաներենի փաստերը ցույց ենտալիս, որ փակ վանկերում եզրային դիրքում կարող են հանդես գալ թե՛ ուժեղներ, թե՛ թույլեր: Այդպիսով ունենում ենք ինչպես nōt,kopf, /նբգ. Not,Kopf /, այնպես էլ līb,smid և tag /նբգ.Leib,Schmied.Tag/ ձևերը: Միջին գերմաներենում ընդհակառակը՝ փակ վանկերում առկա են ուժեղներ, որոնք բաց վանկերում վերածվում են թույլերի կամ ձայնեղների և այդ կերպ հին բարձր գերմաներենի līb.smid ձևերը միջին գերմաներենում արտացոլվում են որպես līp.smit, իսկ սեռականում՝ lībes,smides: Հարկ է նշել, որ այս փոփոխություններում ևս հետնալեզվայինների տեղաշարժը նշույթավորված է և բնութագրվում է ժամանակագրային ու տարածքային սահմանափակվածությամբ: Այդպիսով k>g փոփոխությունը համընկնում է ուշ միջին գերմաներենի շրջանի

---

[1] Տե՛ս Прокош Э., Сравнительная грамматика германских языков, М., 1954, с.37

հետ և համապատասխանաբար սահմանափակվում է վերին սաքսոնական բարբառներով: Ինչ վերաբերում է մյուս բարբառային տարածքներին /հատկապես հարավային և բավարական/, ապա այս երևույթը ունենում է դիրքային պայմանավորվածություն և բացի այդ բնութագրվում է նաև գործառական տարբերակվածությամբ:

Տիպաբանության տեսակետից գերմաներենի շփական բաղաձայնները փոխհարաբերությունների ավելի բարդ պատկեր են ներկայացնում, քանի որ շատ դեպքերում դրանք հանդիսանում են համապատասխան պայթականների փոփոխված ձևերը: Այդուհանդերձ պայթականների շփականացման կողքին միջին գերմաներենի շրջանում կարելի է սահմանել նաև թույլ /ձայնեղ/ շփականների ուժեղացման /խլացման/ միտումը: Ասվածը առաջին հերթին վերաբերում է v>f և z>s փոփոխություններին, որոնք վերին գերմանական տարածքում վաղ նոր բարձր գերմաներենի շրջանում արտահայտվում են նաև հակառակ գործնթացով: Հետևաբար տվյալ դեպքում ունենք պայթականների համակարգում նկատվող համարժեք միտում, որը սակայն, ցուցաբերում է առանձին յուրահատկություններ: Վերջինս արտահայտվում է ատամնային ու նախաքմային, ինչպես նաև նախաքմային ու հետնաքմային շփականների հակադրությամբ: Այստեղ տպաբանության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի միջին և նոր բարձր գերմաներենի շրջանում š և ž շփական-ների տարածման փաստը: Ընդ որում սկզբնային š-ն ի հայտ է գալիս m,n,l,r ձայնորդներից և v շփականից առաջ վերին և ստորին գերմանական տարածքներում: Այս զարգացումը նկատվում է նաև p,t պայթականներից առաջ, որը, սակայն, նոր բարձր գերմաներենում ևս իր գրավոր արտահայտությունը չի գտնում, ինչպես, օրինակ հբգ. sprāha, starc, մբգ. sprâch, starc և նբգ. Sprache, stark: Նկատի ունենալով, որ շփականների այլ կարգի փոփոխությունները միասնական չեն և բացի այդ հյուսիսից մինչև հարավ ունենում ենք մի կողմից š-ի և s,z-ի, իսկ մյուս կողմից ž-ի և x-ի տարբեր փոխհարաբերություններ, ապա կարելի է եզրակացնել, որ դրանք տիպաբանական նշանակություն չունեն: